

ԱՐՕՂ

Բ. ՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Թիւ 3.

ԱՄՍԱԳԻՐ

ՄԱՐՏ 31
1877.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԱԲՐԱՀԱՄ Գ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ա.ԲՐԱՀԱՄ Կաթողիկոսը՝ Սուրբ Աթոռոյս Միաբանութենէն ընտրուած՝ 1712 ին Նուիրակութեան պաշտօնիւ Թէքիրտաղու կողմերը կ'երթայ, ուր իւր պաշտօնը լրացնելէն յետոյ տեղւոյն ժողովուրդը ղինքը առաջնորդ կ'ուզէ. չը կարենալով մերժել ժողովրդեան խնդիրը՝ կը յօժարի մնալ և մօտ 17 տարի առաջնորդական պաշտօն կը վարէ։ Այնուհետեւ 1735 ին Յէջմիածին կ'երթայ, ուխտի Վանցի Աբրահամ Բ. Կաթողիկոսին օրով. սակաւ ժամանակ այն տեղ կը մնայ, եւ Աբրահամ Բ. ի մահէն ղինի ժողովրդեան հաւանութեամբ Կաթողիկոս կ'ընտրուի. ուստի իրեն տեղը Առաջնորդ կը կարգէ իւր ձեռնասուն Յովհաննէս եպիսկոպոսը եւ օրհնութեան կոնդակաւ մը կը ղրկէ իւր թեմը։ Այս կոնդակին օրինակը Թէքիրտաղոյի Արժ. Տէր Արսէն քահանայն ղրկած լինելով մեզ, գոհունակութեամբ սրտի իրրեւ պատմական յիշատակարան կը հրատարակեմք նոյնը պահելով լեզուն։ Կը յուսամք որ բանասէր ընթերցողք եւս հաճութեամբ պիտի կարդան։

digitised by A.R.A.R.@

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Աբրահամ Կաթողիկոս ամենայն Հայոց եւ Պատրիարք Վաղարշապատու լուսակառոյց և տիրանկար վիճակեալ Սրբոյ Առաքելոյն Թադէոսի և Բարդուղիմէոսի յաջորդ եւ փոխանորդ սրբոյն Գրիգորի լուսաւորչին, Սրբոյ և մեծի երկնահանգէտ և ադինասարաս, արիիադիտակ եւ արեգակնաքատակ, սերովբէաձէմ, և քրովբէասպար, գերապայծառ, և գերազարդ, գերագահ, և գերադրական, սարսափելի, եւ ահընկեց շնորհազարդ Աթոռոյս Էջմիածնի. յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան, Շնորհք Առաքելական, և Աստուածային բազմապատիկ օրհնութիւն և նախախնամական գթութիւն 'ի վերայ տիրապահ և Աստուածանամ ծովահայեաց Մայրաքաղաքիդ Թէքիրտաղու. եւ շրջակայ թէմից գիւղաքաղաքաց, և գիւղօրէից. Սիլիվրիու, Զօռլուի, Զաթալճայու, Ղարշդրանու, Պռղաղու, Պապաէսքիու, Տեւակլեայ, Առակլու, Մալղարայու, Տիմաթոքայու, Ուղունքէօբրիու, Հայգեղու, Կէլիպօլուի, Պօղավայու, Էյնայու, Պօղաղհիսարու, Զորիլ բերդից զետեղելոց. Պօղչայատայու, Սէմենտիրէյու, Իլիմնիու, այլ և Կիւմուրճինէու, Էնկիճէու, Տրամայու, Ղավալայու, Սէրէզու, Մէյրիու, Սէլանիկու, Էնկիշէյիրու . . . . և կղզոյն Մոռայու, և Մենեւշէյու, և այլոց Աւանաց, և գեղջաց որում գտանին աղգս Հայոց (1) . . . .

Նախ սրբոց Եկեղեցեաց և եկեղեցականաց գասուց, ուղղաշաւիղ Քահանայից, ուսուցմնասէր Սարկաւագաց, հաւատարիմ Երիցփոխաց, Պերճապատիւ Իշխանաց. գայլք զեղուն Տօրլաթաւորաց, խնամատարն վաճառականաց, գեղեցկանկար Արուեստաւորաց, արդարավաստակ Երկրագործաց, համեստաբարոյ Տանտիկնէրաց. եւ այլ առ հասարակ ամենայն ժողովրդականաց խմբից. մեծամեծաց և փոքրունց, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց. երիտասարդաց եւ կուսանաց և ամենայն չափու հասակի, տիոյ և կարգի 'ի Քրիստոս Աստուած հաւատացեալ լուսաւորչաձին երամոյդ խմբից միշտ խնդալ 'ի Տէր Յիսուս Քրիստոս յոյսն ամենից բնաւից հաւատացելոց յարաղուարձ բերկրանօք, յամերամ ամենակօք, անսայթաք կենօք. յար և միշտ ամէն։

Շնորհք ընդ ձեզ, եւ երկնաւոր խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ գերակրելական պատճառ էին ինքնագոյի. գթութիւն և ողորմութիւն 'ի նորին իսկակից բանէն էականի նոյնազորի Սէր և քաղցրութիւն համապատուի նոցին Ամենազօր Սուրբ Հոգւոյն կենարարէ ինքն եւ հանգիցէ 'ի վերայ ձեր, եկեսցէ և բնակեսցի առ ձեզ, իբրեւ 'ի յորձանս գետոց եւ որպէս զվտակս աղբերաց յորդահոս բղխմամբ եւ առատապէս ծաւալմամբ. ընդ որոյ հովանաւորութեամբն զօրասջիք և պահպանեսջիք. նախախնամեսջիք և կառավարեսջիք մինչ 'ի խորին ծերութիւն ամէն։

Օրհնեսցէ և պահպանեսցէ զձեզ Տէր Աստուածն յաւիտենական սիրովն գերասահման և անսպառական, պարգեւելով կեանս խաղաղական, և ժամանակս անդորրական, աւուրս յաջաձգական եւ ամն բազմաչափական

(1) Այս տեղերէն ոմանք այժմ Ադրիանուպոլսոյ Թեմին կը վերաբերին. իսկ շատերուն մէջ բնաւ Հայ չը կայ. Թերեւս հետզհետէ գաղթած են կեդրոնական քաղաքները, ինչպէս են Թէքիրտաղ և Ադրիանուպոլիս։ Ծ. Խ.

digitised by A.R.A.R.@

լինիլ գոյութք յոքնաղան, և ընչութք բա-
ւեհաճական. ստացուածովք՝ ուռ-
ճական. տերամբ ունել զնոյն շահե-
ցողական զարդարեալ ուստերօք
ծաղկանման եւ պճնեալ դստերօք
զանազան. իբրու զաւակ օրհնութեան
և պտուղ բաղցրութեան ոստ բարե-
նշան. եւ ճիւ վայելչութեան. սե-
բունդ զուարճական, և զարմ յարմնա-
ցական ժառանգ սեպհական. և ծը-
նունդ հարազատութեան. յաւիտեա-
նըս ամէն։

Եւ 'ի մատանել օրհնութեան նա-
մակիս մերոյ առ ձեզ, զամենայն ներ-
հակն բարւոյն և զտեսակ չարին փո-
խարկեսցէ Տէր Աստուած մեր զմեղ-
քին յարդարութիւն, զանէծքն՝ յօրհ-
նութիւն. զապականութիւն՝ յանապա-
կանութիւն. զհպարտութիւն՝ 'ի խո-
նարհութիւն. զատելութիւն՝ 'ի սէր,
զվառվռութիւն՝ 'ի հաշտութիւն և 'ի
բարեկամութիւն. զծուլութիւն՝ յա-
ւիւթիւն. զանողորմածութիւն՝ յո-
ղորմածութիւն. զորկրամոլութիւն և
զարբեցութիւն՝ 'ի պահս և 'ի պարկ-
եշտութիւն. զանառակութիւն՝ 'ի
զգաստութիւն, և զբղջախոհութիւն
զանդարձ և զանզեղջ մեղաւորն 'ի զբղ-
ջումն և յապաշխարութիւն, զհիւան-
դութիւն՝ յառողջութիւն. զտկարու-
թիւն՝ 'ի զօրութիւն. զնուազութիւն
'ի լիութիւն. զպակասութիւն՝ յառա-
տութիւն, զչարութիւն՝ 'ի բարու-
թիւն. զսուգն՝ 'ի մխիթարութիւն.
զարտմութիւն՝ յուրախութիւն. զայն՝
'ի ծաղր և 'ի խնդութիւն. զանգիտու-
թիւն՝ 'ի գիտութիւն. զյիմարութիւն՝
յիմաստութիւն. զդառնութիւն՝ 'ի
քաղցրութիւն. զմոլորութիւն՝ յառա-
քինութիւն. զաղքատութիւն՝ 'ի փարթ-
համութիւն. զչարչարանքն՝ 'ի հան-
գիստ. զգերութիւն՝ յազատութիւն,
և զամենայն կեանս ձեզ անդորրու-
թեամբ վայելել տացէ Տէր Աստուած
մեր իւր առատ ողորմութեամբն, ըզ-
վաստակս ձեր ուրախութեամբ վայե-
լեսջիք. և զպտուղ աշխատանաց որ-
դիք ձեր կերիցեն ամէն։

Տունք ձեր իբրեւ զտուն Աստու-
ծոյ, և որդիք ձեր իբրեւ զորդիս լու-
սոյ և տունջեան. կանայք ձեր իբ-
րեւ զայգի վայելուչ. և որդիք ձեր որ-
պէս նորատունկ ձիթենւոյ շուրջ ըզ-
սեղանովք ձերովք. փեսայք ձեր իբ-
րև զփեսայ յառագաստի շնորհօք զար-
դարեալ նման արեգական. հարսունք
ձեր որպէս զլուսին շնորհօք [պարկեշ-
տացեալ և բոլորեալ. ծեր 'ի տանէ
քումմէ մի՛ պակասեսցի. եւ օրհնու-
թիւն Տեառն միշտ ընդ ձեզ եղիցի
ամէն։

Այլ և օրհնեսցէ զձեզ Տէր Աս-
տուած մեր, և զարդարեսցէ հոգւով
և մարմնով, տերամբ, և տեղեօք, որ-
դւովք, և դստերօք, ընչութք, և ապ-
բանօք, առօք, եւ տրօք, շահօք եւ
վաճառօք, սիրելեօք, եւ բարեկամք
ամէն։

Եւ ընդ Աստուածապարգեւ եւ
շնորհաղեղուն օրհնութեան նամակիս
ծանուցումն լեցի ձեզ վերոյգրեալ
մայրաքաղաքիդ Թէքիրտաղու և նորին
շրջակայ թեմից և վիճակացդ. զի ըստ
որում գրէ մեծն Դիոնէսիոս. թէ ա-
մենայն տուրք բարիք, եւ ամենայն
պարգեւք կատարեալք 'ի վերուստ են
իջեալք առ 'ի Հօրէն լուսոյ. և նոյն
Աստուածապետականին վերնահոս շը-
նորհքն. և բաղմապատիկ պարգեւքն
որ 'ի գերահրաշ լուսոյն լիով իջանէ,
և 'ի տիպ Աստուածայնոյ բարութեան
զհողաղանգուածան ճոխացուցեալ պէս
պէս զարդու տնօրինէ. եւ վերհագոյն
իմն անճառելի խորհրդով նախանա-
մելով աղգի մարդկան զգաւաղան իշ-
խանութեան 'ի վերոյ միահամուռ

digitised by A.R.A.R.@

արարածոց միշտ ցուցանէ. և ոչ միայն աստուածապէս զամենեսեան ինքեամբ բըն կառավարէ. այլ և զընտանիս արարածոց սեպհականեալ խորհրդազգածս առնէ. և տեսուչս, և հովիւս ժողովրդեան նախակարգէ. որպէս եւ տեսանի յարարածս ամենայն. նոյնպէս կարգաւորաբար գլխաւորեալ զերկինս երկնաւ. և զաշխարհս արեգակամբ և զգալիս իմանալեաւ. եւ զկենդանիս գլխով իմն. ուր ամենայն զգայութիւնքն են առ եդեալ. զի ամենեքեանքն անտեսուչս և հաւասարք երեւեսցին և անկարգ առանց խնամոց եղեալ կարծեսցին. այլ զի ծայրագոյն իմաստութիւն Աստուծոյ 'ի նոսա երեւեսցին. և 'ի գեղեցկութենէ արարածոյն ըստ նմին եւ արարչագործն նոցա ծանիցի. ըստ Առաքելոց. թէ աներեւոյթք նորա իսկզբանէ աշխարհիս արարածովք իմացեալ տեսանին մշտնջենաւորութիւն և զօրութիւն և Աստուածութիւն նորա։

Արդ իմաստուն Ճարտարապետն Աստուած զնոյն սահմանի սկզբնահայրըն մեր ըստ նմանութեան ինքեան հրաշակերտեալ 'ի տեսչութիւն էիցս նախակարգեաց. ըստ այնմ թէ զամենայն ինչ հնազանդ արարեր 'ի ներքոյ նորա փառաւք և պատուաւք պսակեալ կացուցեր 'ի վերայ ամենայն ձեռակերտաց քոց։ Եւ նոյն տիպ և օրինակ հոմիշխան տեսչութեամբ հնոյն Իսրայելի եւ առաջնորդութիւն երկրին Աւետեաց գաւազանաւ ընձեռեաց Մովսէսի 'ի սաստ և 'ի յամօթ Եգիպտացւոց. և 'ի պարծանս հաւատացելոց։ Եւ ոչ միայն զապստամբեալսն 'ի նոցանէ հրակիզեաց և կենդանւոյն 'ի դժոխս ի՛ջոյց. այլ եւ զԱհարոնեան գաւազանն դալարեցոյց որպէս զի ցուցցի իշխանութիւն ոչ յուստեք գոլ, եթէ ոչ յԱստուծոյ. և որ են յԱստուծոյ կարգեալ են. ըստ Առաքելոց. եւ սքանչելասես մարգարէին Զաքարիայ եցոյց զհրաշափառ խորհուրդ իշխանութեան այսորիկ կրկին ձիթենեաքն. որք ընդ աջմէ, և ընդ ահեկէ ոսկեղինիկ աշտանակին և եօթնաբերան ճրագացն կային, որք յայտնապէս նկարէին զխորհուրդ Առաջնորդաց սրբոց, որք 'ի հնումն և 'ի նորումս պայծառագեղ կանանչափթթիւն եւ սաղարթախիտ պարարտութեամբ լուսաւորեն զեկեղեցի սուրբ. ըստ որում նոյն ինքն լրումն օրինաց եւ կատարումն մարգարէից Տէրն մեր Յիսուս Քրիստոս, 'ի փրկական տնօրինութեան և 'ի կենարար վարդապետութեան իւրում զխորհուրդ իշխանութեանս այսորիկ 'ի հօտս և ի հովիւս առակելով զինքն հովիւ և զհաւատացեալս իւր 'ի հօտս և յաշխարհս օրինակեալ հրամայեաց թէ Ես եմ հովիւն քաջ և թէ ոչխարքն իմ ձայնի իմում լուիցեն. և զտարի մի երթիցեն զհետ. եւ լուիցեն զձայն օտարաց. Այլ եւ 'ի դէմս համադասուն առ ծերագոյնն Պետրոս եռապատիկ հարցմամբ զսիրոյն երրակի ուրացութեանն քաւելով զմեղս զերջանկագոյն պետականութիւն իշխանութեան իւրոյ յանձնեաց ասելով. Արածեա՛ զգառինս իմ եւ զոչխարս իմ։ Եւ այսու օրինակաւ զեսն իմ բառնալով ձկնորսաք եւ յիմարաքն աշխարհի. յամօթ արար զիմաստունսն եւ զխորհրդականս ամենայն կայուցանելով զԱռաքեալսն՝ իշխանս և տեսուչս ազգաց, և աղանց. լուսատու լինել տիեզերաց, և առաջնորդելով համայնից արդարութեան ճանապարհաւ և առաքինութեանց օրինակաւ 'ի կեանսն յաւիտենից։ Քանզի որպէս ամենայն արարածոց, և յամենայնի բանականս, եւ քաղաքավարութիւնս աշխարհի

digitised by A.R.A.R.@

կարգ են և սահման, և միանգամայն կարօտին առաջնորդութեան նախակարգելով ուժեք. որպէս ոչխարքն հովուին, եւ աշակերտքն վարդապետին, և ընտանիքն տանուտեառն, և ծառայքն տերանց. և զոլքն զօրավարին, և իշխեցեալքն իշխանին, և աշխարհ ինքնակալ թագաւորին.....։

Այսպէս և Տէր մեր Յիսուս Քրիստոս ոչ եթող զեկեղեցին իւր սուրբ առանց հովուաց եւ Առաջնորդաց անխնամ մնալ և անկարգ. այլ ամրացոյց մարգարէիւք. պարսպեաց առաքելովք, պսակազարդ արար մարտիրոսօք. զուարճացոյց վարդապետական բանիւ ըստ Առաքելոյ, թէ զորս եդ Աստուած յեկեղեցւոջ, այս են՝ նախ զԱռաքեալսն. երկրորդ զՄարգարէս. երրորդ զՎարդապետս. եւ այս հրաման և իշխանութիւն ըստ կարգի հոգեւորական պետութեան 'ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, աւանդեալ սրբոյ Եկեղեցւոյ. մանաւանդ Հայաստանեայց։ Տինա՛ և եկեղեցիդ իմ նոր բազմակ սուրբ Յովհաննէս Աւետարանիչ և սիրելի աշակերտ Տեառնմերոյ Յիսուսի Քրիստոսի, որ 'ի Թէքիրտաղ մայրաքաղաքիդ կառուցեալ է բազում աշխատութեամբ և 'ի հերուն հետէ տարփայի եւ փափաքելի վերանորոգման գեղեցկատես և պատուական Ծովահայեաց սուրբ Եկեղեցւոյդ. վասն որոյ և պարգեւողն բարեաց, Հոգին Սուրբ Աստուած Ճշմարիտ առաջնորդեաց եւ 'ի կատար հասոյց եւ զհոգեւոր փափաքն իմ լցոյց, և զկնդիրքն իմ բազմաժամանակեայ կատարեաց։ Փառք բարերարին Աստուծոյ. զի իբրեւ արեգակ փայլի 'ի մէջ աստեղաց. որք և բուն վարդապետաց օթեւան և ասպնջական գոչով զարդացեալ էք, հաստատուն կերակրօք, և ոչ կարօտացաք կամ թին և առակաց կամ օրինաց։

Եւ ես վարժեցի զձեզ ըստ կարգութեան ձերում հոգեւոր մշակութեամբ, 'ի վայրի գալարուոջ բնակեցուցանելով եւ 'ի ջուրս հանգստեան սնուցի զձեզ ըստ հրամանի Փրկչին Աւետարանական բանիւն. վասն զի ստուգիւ գիտեմ. զի լուեալ եմ 'ի ձերոյ ձերոյ. վասն զի լուսահոգի Գրիգոր վարդապետն որ էր նախկին Առաջնորդն ձեր քաղաքիդ այդմիկ, որ իսկապէս իբրև զջահ պայծառ փայլէր յեկեղեցւոջդ ձերում. որում հոգեւոյն Տէրն ողորմեսցի, եւ զկնի ելից նորա յաշխարհէս թէպէտ և առ ժամանակեայ ինչ աւուրքդ սուղ ինչ աղօտանալ թուեցաւ Եկեղեցւոյ ձերում 'ի ձեռն ոմանց կեղծաւորեալ խաբեբայից որպէս զխորդացեալ Ամենացիսն եւ զՊոլաբացիսն, կրկին ողորմութեան Աստուծոյ Նշոյլ ծագեաց 'ի վերայ ձեր։

(Շարունակելի։)

ԵԴԵՍԻԱ

Թէպէտ ամենուրեք և ամեն Հայաբնակ գաւառաց և քաղաքաց մէջ Ազգային յառաջադիմութեան եւ լուսաւորութեան համար տեղի ունեցած շարժմանց լուրերն ամեն յառաջադիմասէր, ազգասէր և հայրենասէր Հայ սրտերու բերկրառիթ և մխիթարական են. սակայն բաղդատմամբ տեղեաց՝ դրից եւ բնակչաց բարոյական և նիւթական վիճակին, աւելի մխիթարական եւ քաջալերիչ են Հայ սրտերու մանաւանդ այն Հայաբնակ գաւառաց և քաղաքաց յառաջադիմական խլբտումներն, որք Ասիոյ խորերը, ամեն

digitised by A.R.A.R.@